Պարույր Սևակ

Ուր է գիշերը հազարմեկերորդ

Անձրևն իր հալված երկար մատներով
Մատնահարում է լռին մայթերի գորշ ստեղները,
Եվ ամայացած-քնած քաղաքում
Սկիզբ է առնում մի խուլ եղանակ,
Որտեղ մաս ունի
Աշնան ծառերի դանդաղ դեղնելը,
Ե՛վ այն ամուրին,
Որ պաղ սենյակում քնել է մենակ,
Ե՛վ այն բողոքը,
Որ դատարանում իզուր չի հարգվել,
Ե՛վ այն կարոտը,
Որ սրտի վրա՝
Իր տիրո՛ջ վրա,
Նոր տեր է կարգվել,
Ե՛վ այն աղջիկը,
Որ գեշ երազից ճչում է անձայն,
Ե՛վ այն հուշերը,
Որ եկան անկոչ,
Ես վոընդեցի՛,
Բայց էլի՛ չանցան:
Չանցա՛ն

Եվ հիմա,
Ինձ հետ միասին,
Ականջ են դնում,
Թե անձրևն իր պաղ, երկար մատներով,
Իր վատ նվագից չվհատվելով,
Ինչպե՞ս է ծեծում
Համբր մայթերի ստեղնաշարը:
Եվ իմ տխրության,
Չանցնող կարոտի առատ պաշարը
Համալրրվում է գթոտ խոսքերի նոր մթերումով:
Քո հեռո՛ւ-հեռո՛ւ պաղ մայթերում ո՞վ,
Ո՞վ կարող է քեզ այն խոսքերն ասել,
Որ եկել ահա բկիս են հասել.
-Իմ սիրտը
Սիրո հազար գիշեր է ապրել ու տեսել,
Իսկ ո՞ւր է հապա,
Ո՞ւր է գիշերը հազարմեկերորդ:
Մինչև վերջ պատմել ինչո՞ւ չես ուզում,
Ինչո՞ւ չես ուզում,
Իմ Շահրազադե՛:
Դու ո՞ւմ ես ուզում մահից ազատել...

14.X.1959թ.
Չանախչի